ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ԴԱՍՏԱԿԵՐՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀՀ Սյունիքի մարզ ք..Դաստակերտ,

էլ-հասցե՝ dastakert@schools.am

25.հոկտեմբեր2023թ.

ՀՀ ԿԳՄՄՆ գլխավոր քարտուղար

Հ.Հակոբյանին

Հարգելի Հ.Հակոբյան Ձեզ ենք ներկայացնում «Դաստակերտի միջնակարգ դպրոց և Սոֆլուի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի ուսուցչի թափուր տեղի մրցույթի հայտարարությունը:

Առդիր՝ էլեկտրոնային նյութ:

Դպրոցի տնօրենի պաշտոնակատար՝ Գ. Ապրեսյան

Մրցույթ՝ ՀՀՍյունիքիմարզի «Սոֆլուի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի մաթեմատիկայի(5դասաժամ),ինֆորմատիկա (3դասաժամ),և «Դաստակերտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի մաթեմատիկայի(10դասաժամ) թափուրտեղ/երի համար

Մրցույթն անցկացվում է երկուփուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլնանցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայությանդեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
-այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2023 թվականի հոկտեմբերի 25-ից մինչև նոյեմբերի 07-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2023թ.նոյեմբերի 13-ին՝ ժամը 13:00-ին**,«Դաստակերտի միջնակրգ դպրոց»ՊՈԱԿ,հասցե՝ ք. Դաստակերտ Ավետյան 15:Տեղեկությունների համար զանգահարել 093863433, 093035600հեռախոսահամարով: